«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

8 ապրիլ, 2024թ. N 6-Լ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի 10-11-րդ կետերով և 17-րդ, 19-րդ և 20-րդ կետերով, ինչպես նաև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կանոնադրության 21-րդ կետի 21-րդ ենթակետով՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ***որոշում է.***

1. Հաստատել հավատարմագրման պետական գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ք. ԾԱՏՈՒՐՅԱՆ

2024թ. ապրիլ «8»

Երևան

Հավելված
«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային
կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
2024թ.ապրիլի 8-ի N 6_Լ որոշման

ԿԱՐԳ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հավատարմագրման պետական գրանցամատյանի վարման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 978-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ) 10-11-րդ և 17-րդ, 19-րդ, 21-րդ կետերի պահանջները:

2. Սույն Կարգով սահմանվում է հավատարմագրման պետական գրանցամատյանին (այսուհետ՝ Գրանցամատյան) ներկայացվող պահանջները և վարման կարգը:

3. Գրանցամատյանը բաղկացած է երկու բաժնից՝

1) **Ինստիտուցիոնալ հավատարմագրման բաժին՝** «Բարձրագույն ուսումնական հաստատություններ», «Նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ» ենթաբաժիններով,

2) **Ծրագրային հավատարմագրման բաժին՝** «Բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրեր», «Նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրեր» ենթաբաժիններով:

4. Գրանցամատյանը տեղադրվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) www.anqa.am պաշտոնական կայք էջում:

5. Գրանցամատյանում գրառված տեղեկությունները համաժամանակացվում են Որակի ապահովման եվրոպական ռեգիստրի (այսուհետ՝ EQAR) Որակի արտաքին ապահովման արդյունքների շտեմարանում (այսուհետ՝ DEQAR)՝ համաձայն DEQAR-ի պահանջների:

6. Գրանցամատյանը տեղեկություններ է պարունակում հայաստանյան կամ օտարերկրյա կազմակերպությունների կողմից ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում անցած մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) և դրանց մասնագիտությունների կրթական ծրագրերի վերաբերյալ:

7. ՄՈՒՀ-երի և դրանց մասնագիտությունների հավատարմագրման արդյունքները ճանաչվում են Գրանցամատյանում գրանցվելու պահից:

2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ

8. «Բարձրագույն ուսումնական հաստատություններ», «Նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ» ենթաբաժինները բաղկացած են հետևյալ տողերից, որտեղ լրացվում է անհրաժեշտ տեղեկատվությունը.

1) Հավատարմագրման պահանջը (*Հավատարմագրման կարգով սահմանված պահանջը՝ պարտադիր*)

2) Հավատարմագրող կազմակերպության անվանումը և երկիրը (*օտարերկրյա հավատարմագրող կառույցի դեպքում նշվում է նաև ENQA, EQAR անդամակցության կամ լիազոր մարմնի կողմից ճանաչման փաստը*)

3) ՄՈՒՀ-ի լրիվ անվանումը և կազմակերպաիրավական ձևը

4) Կարգավիճակը *(հավատարմագրված կամ պայմանով հավատարմագրված, չհավատարմագրված, ընթացքի մեջ*)

5) Հավատարմագրման տեսակը (*ինստիտուցիոնալ*)

6) Հավատարմագրման վկայականի համարը

7) Գրանցման ամսաթիվը

8) Վավեր է սկսած

9) Վավեր է մինչև

10) Հավատարմագրման հանձնաժողովի որոշման համարը

11) Հավատարմագրման հանձնաժողովի որոշման ամսաթիվը

12) ԿԳՄՍ նախարարի հրամանի համարը (*կիրառելի է հայաստանյան կառույցի դեպքում*)

13) ԿԳՄՍ նախարարի հրամանի ամսաթիվը (*կիրառելի է հայաստանյան կառույցի դեպքում*)

14) Հաջորդ դիմելու վերջնաժամկետը

15) Հավատարմագրման վկայականն ուժը կորցրած ճանաչելու որոշման համարը

16) Հավատարմագրման վկայականն ուժը կորցրած ճանաչելու որոշման ամսաթիվը

17) ՄՈՒՀ-ի գործունեության վայրը, կայք էջը, հեռախոսահամարը

18) ՄՈՒՀ-ին շնորհված հավատարմագրման վկայականը

19) Վերաբերելի փաստաթղթերը (*ԿԳՄՍ նախարարի հրամանը (հայկական կառույցի կողմից հավատարմագրման դեպքում), Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը, փորձագիտական զեկույցը, Հավատարմագրման վկայականն ուժը կորցրած ճանաչելու որոշումը*)

20) Լրացուցիչ տեղեկություններ

21) Փորձագիտական խումբը (*անունը, ազգանունը, փորձագիտական խմբում դերը, գիտական կոչումը և/կամ աստիճանը, աշխատավայրը, պաշտոնը, երկիրը*):

3. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ

9. «Բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրեր», «Նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրեր» ենթաբաժինները բաղկացած են հետևյալ տողերից, որտեղ լրացվում է անհրաժեշտ տեղեկատվությունը.

1) Հավատարմագրման պահանջը (*Հավատարմագրման կարգով սահմանված պահանջը՝ կամավոր*)

2) Հավատարմագրող կազմակերպության անվանումը և երկիրը (*օտարերկրյա հավատարմագրող կառույցի դեպքում նշվում է նաև ENQA, EQAR անդամակցության կամ լիազոր մարմնի կողմից ճանաչման փաստը*)

3) ՄՈՒՀ-ի լրիվ անվանումը և կազմակերպաիրավական ձևը

4) Կարգավիճակը *(հավատարմագրված կամ պայմանով հավատարմագրված չհավատարմագրված, ընթացքի մեջ*)

5) Հավատարմագրման տեսակը (*ծրագրային*)

6) Հավատարմագրման վկայականի համարը

7) Գրանցման ամսաթիվը

8) Վավեր է սկսած

9) Վավեր է մինչև
10) Հավատարմագրման հանձնաժողովի որոշման համարը
11) Հավատարմագրման հանձնաժողովի որոշման ամսաթիվը
12) ԿԳՄՍ նախարարի հրամանի համարը (*կիրառելի է հայաստանյան կառույցի դեպքում*)
13) ԿԳՄՍ նախարարի հրամանի ամսաթիվը (*կիրառելի է հայաստանյան կառույցի դեպքում*)
14) Հաջորդ դիմելու վերջնաժամկետը
15) Հավատարմագրման վկայականն ուժը կորցրած ճանաչելու որոշման համարը
16) Հավատարմագրման վկայականն ուժը կորցրած ճանաչելու որոշման ամսաթիվը
17) Կրթական ծրագիրը (*մասնագիտության լրիվ անվանումը, դասիչը, կրթական աստիճանը, ուսուցման ձևը*)
18) ՄՈՒՀ-ի գործունեության վայրը, կայք էջը, հեռախոսահամարը
19) ՄՈՒՀ-ին շնորհված հավատարմագրման վկայականը
20) Վերաբերելի փաստաթղթերը (*ԿԳՄՍ նախարարի հրամանը (հայկական կառույցի կողմից իրականացման դեպքում), Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը, փորձագիտական զեկույցը, Հավատարմագրման վկայականն ուժը կորցրած ճանաչելու որոշումը*)
21) Լրացուցիչ տեղեկություններ
22) Փորձագիտական խումբը (*անունը, ազգանունը, փորձագիտական խմբում դերը, գիտական կոչումը և/կամ աստիճանը, աշխատավայրը, պաշտոնը, երկիրը*):

4. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Գրանցամատյանում գրանցվում և հավատարմագրման արդյունքները ճանաչվում են, եթե հավատարմագրումներն իրականացվել են.

1) Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) գրանցված, ինչպես նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպությունների կողմից, կամ
2) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ցանկում ներառված և ճանաչված կառույցների կողմից:

5. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՈՒՄԸ

11. Գրանցամատյանի վարումը կազմակերպում է ՈԱԱԿ քարտուղարությունը:

12. Գրանցամատյանը վարվում է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն, առանց կրճատումների և հապավումների: Հայերեն և անգլերեն տարբերակներում առկա հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

13.Գրանցամատյանում հրապարակված տեղեկությունները վերջնական են և պաշտոնական:

14. Արգելվում է Գրանցամատյանում փոփոխությունները՝ բացառությամբ.

1) տեխնիկական վրիպակները,
2) սույն Կարգի 8-րդ և 9-րդ կետերի 3-րդ և համապատասխանաբար 17-րդ և 18-րդ ենթակետերում պահանջվող ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխություններ,
3) սույն Կարգի 8-րդ և 9-րդ կետերի 15-րդ և 16-րդ ենթակետերում տեղեկությունների փոփոխությունները:

15. Օտարերկրյա կազմակերպությունների կողմից հավատարմագրված ՄՈՒՀ-ը ՈԱԱԿ ներկայացնում է սույն Կարգի 8-րդ կետի 18-րդ և 19-րդ ենթակետերով և 9-րդ կետի 19-րդ և 20-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերի բնօրինակ լեզվով պատճենները, ինչպես նաև դրանց նոտարական վավերացումով թարգմանությունները: Պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում ՄՈՒՀ-ի հավատարմագրման արդյունքները չեն գրանցվում Գրանցամատյանում:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Սույն Կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

19. Գործող գրանցամատյանը և դրանում պարունակող տեղեկությունները համապատասխանեցվում են սույն կարգի պահանջներին: